ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

02.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/102

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.07.2018թ. թիվ 03/26-3/12224-18 գրությամբ «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 12.06.2018թ. թիվ Ե/40/300-18, 26.06.2018թ. թիվ Ե/40/417-18 և 03.07.2018թ. թիվ Ե/40/491-18 գրությունների հիման վրա, 04.07.2018թ. թիվ 03/26-3/12224-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Զիպեռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

1. **«Զիպեռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Զիպեռ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/102 ընթացակարգի շրջանակներում 09.07.2018թ. ժամը 10:40-ին և 16.07.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. **«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2018թ. թիվ Ε/40/300-18, 26.06.2018թ. թիվ Ε/40/417-18 և 03.07.2018թ. թիվ Ε/40/491-18 գրություններով ներկայացրել է «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/102 ընթացակարգի շրջանակներում 09.07.2018թ. ժամը 10:40-ին և 16.07.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2018/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2018/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 07.03.2017թ. կնքվել է «Հայկական Ատոմային Էլեկտրակայան»

ՓԲԸ-ի կարիքների համար գործիքների մատակարարման «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով թիվ 04/026 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 1):

2. Պայմանագիր 1-ի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրի և թիվ 2 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով 38 անուն գործիք:

3. Կողմերի միջև Պայմանագիր 1-ի շրջանակներում կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել՝ հղկասկավառակ հրաբխային, համապատասխանաբար՝ 10 հատ, 3 հատ, 12 հատ, մեքենա, համապատասխանաբար՝ 4 հատ, 6 հատ, 5 հատ:

4. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 20.03.2017թ. կնքվել է «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար գործիքների մատակարարման «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-11/17» ծածկագրով թիվ 04/047 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 2):

5. Պայմանագիր 2-ի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրի և թիվ 2 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով 73 անուն գործիք:

6. Կողմերի միջև Պայմանագիր 2-ի շրջանակներում 27.09.2017թ. կնքված հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից Պատվիրատուին ընդհանրապես չեն մատակարարվել 59 անուն ապրանք, իսկ 9 անուն ապրանք մատակարարվել է թերի:

7. Ընկերությանն ուղղված 11.06.2018թ. թիվ Ε/40/284-18 գրությամբ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով պայմանագրերի 3.1.7 կետը, Պատվիրատուն չմատակարարված չափաբաժինների մասով 08.06.2018թ. միակողմանի լուծում է «Զիպեռ» ՍՊԸ-ի հետ 07.03.2018թ. և 20.03.2018թ. կնքված թիվ 04/047 և թիվ 04/026 գործիքների մատակարարման պայմանագրերը:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2018թ. թիվ 03/26-3/12224-18 գրությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 12.06.2018թ. թիվ Ε/40/300-18, 26.06.2018թ. թիվ Ε/40/417-18 և 03.07.2018թ. թիվ Ε/40/491-18 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն,***

որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 07.03.2017թ. կնքվել է «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար գործիքների մատակարարման «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով թիվ 04/026 պայմանագիրը:

Պայմանագիր 1-ի 1-ին կետի 1.1 ենթակետով «Զիպեռ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագիր 1-ի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված գործիքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիր 1-ի թիվ 2 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով 38 անուն գործիք:

Կողմերի միջև Պայմանագիր 1-ի շրջանակներում կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չեն մատակարարվել՝ հղկասկավառակ հրաբխային, համապատասխանաբար՝ 10 հատ, 3 հատ, 12 հատ, մեքենա՝ համապատասխանաբար 4 հատ, 6 հատ, 5 հատ:

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 20.03.2017թ. կնքվել է «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար գործիքների մատակարարման «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-11/17» ծածկագրով թիվ 04/047 պայմանագիրը:

Պայմանագիր 2-ի 1-ին կետի 1.1 ենթակետով «Զիպեռ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված N 2) գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագիր 2-ի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված գործիքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիր 2-ի թիվ 2 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին մատակարարել համապատասխան քանակներով 73 անուն գործիք:

Կողմերի միջև Պայմանագիր 2-ի շրջանակներում 27.09.2017թ. կնքված հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից Պատվիրատուին ընդհանրապես չեն մատակարարվել 59 անուն ապրանք, իսկ 9 անուն ապրանք մատակարարվել է թերի:

Ընկերությանն ուղղված 11.06.2018թ. թիվ Ε/40/284-18 գրությամբ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով պայմանագրերի 3.1.7 կետը, Պատվիրատուն չմատակարարված չափաբաժինների մասով 08.06.2018թ. միակողմանի լուծում է «Զիպեռ» ՍՊԸ-ի հետ 07.03.2018թ. և 20.03.2018թ. կնքված թիվ 04/047 և թիվ 04/026 գործիքների մատակարարման պայմանագրերը:

Պայմանագրերի 3-րդ կետի 3.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 07.03.2017թ. կնքված «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով թիվ 04/026 և 20.03.2017թ.

կնքված «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-11/17» ծածկագրով թիվ 04/047 պայմանագրերով ստանձնած մեկից ավելի պարտավորություն, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրերի միակողմանի լուծման, քանի որ Ընկերությունը Պայմանագիր 1-ի շրջանակներում չի մատակարարել 2 անուն ապրանք համապատասխան. քանակներով (հղկասկավառակ հրաբխային, համապատասխանաբար՝ 10 հատ, 3 հատ, 12 հատ, մեքենա՝ համապատասխանաբար 4 հատ, 6 հատ, 5 հատ), իսկ Պայմանագիր 2-ի շրջանակներում ընդհանրապես չի մատակարարել 59 անուն ապրանք, իսկ 9 անուն ապրանք մատակարարվել է թերի:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 08.06.2018թ., հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2018թ. թիվ 03/26-3/12224-18 գրությամբ ներկայացված «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.07.2018թ. թիվ 03/26-3/12224-18 գրությամբ «Զիպեռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02538307) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ